Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4676

2011

891.99
Բ-12

2003

2798

~~4295.~~

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ
ԵՒ
ԴԵՐԱՍԱՆ

4676

Վոլ. մէկ գրքոյ

Հրատ. Խուչատուր

ԹԻՖԼԻՍ
Типографія Бр. Таварткиладзе. Сергіевская № 1
1904

Дозв. ценз. Тифлисъ, 14-го іюля 1903 года

Настоящая піеса, подъ заглавіемъ «Артистка и Артистъ», соч. Айрапета Бабурянцъ, разрешено г. И. об. Главноначальствующаго для представленія на сценахъ края. Февраля 22 дня 1903 г. Тифлисъ.

Դերծող անձինք

Օր. Վարդուհի Յակոբեան, *դերասանուհի*, 22 *տարեկան*:

Պ. Միքայել Սարգսեան, *դերասան*, 25 *տարեկան*:

Օր. Մարգարիտ Սալիկեան, *սիրողուհի*, 18 *տարեկան*:

Գրիգոր, *հիւրանոցի ծառայ*, 21 *տարեկան*:

Բեմը ներկայացնում է հիւրանոցի սենեակ, սեղան, 2 աթոռ եւ շիրմայով ծածկած կրաւատ: Սկզբում բեմը դատարկ է:



ՏԵՍԻԼ 1

Վարդուհի, Միքայել եւ Գրիգոր (*նեղս են մտնում*):

Միքայել. Ա՜յ տղայ, ա՞յս է ձեր սենեակը:

Գրիգոր. Հրամմէլ ես տղա:

Միքայել. Ո՞րտեղ է սրա տէրը:

Գրիգ. Տէրն ինչ ա տղա:

Միք. Խազէյնը:

Գրիգ. Խազէյնը քինացել ա քաղաք, խէլի վախտից կէդայ:

Միք. Դէ լաւ, գնա, բայց անունդ ինչ է:

Գրիգ. Անունս Կիրիկոր ա:

Միք. (*Ձեռքով նշան է անում, որ հեռանայ*): Դէ, քշէիր:

Գրիգ. Ո՞ւր քշեմ:

Միք. Դուրս կորիր էլի, վա՛:

Գրիգ. Լաւ ապա ջան։ (*Մի կողմ*)։ Էս ինչ հեբասան ա էկել։ (*Դուրս է գնում։ Զամբանը կրաւատի տակն են պահում. վերջապէս տեղաւորւում են։ Վարդուհին եւ Մինասյէլը նստում են կրաւատի վրայ կողք կողքի*)։

Միհ. Էհ, վերջապէս, ահա մենք հասանք մեր նպատակին։ Ես ու դու էլ վերջապէս սկսեցինք ճանապարհորդելը՞, ինչպէս ես զգում քեզ։

Վարդ. Մի փոքր... այնպէս...

Միհ. Ինչպէս թէ այնպէս... երեւի մը-տածում ես ներկայացման մասին, անհոգ եղիր. ես ամեն բան կարգի կբերեմ։ Ինչու չես հանւում, հանւիր։ (*Վարդուհին հանւում է*)։ Թող ես հանեմ... Հա, իսկոյն կերթանք միասին սիրողներին գտնելու. կ՚որոշենք մեր խաղալու պիէսան և յետոյ վերջումն էլ կըդնենք մեր վոդեվիլը, այնպէս չէ։

Վարդ. Ի՞նչ վոդեվիլ։

Միհ. Մի՞թէ չըգիտես, այն վոդեվիլը որի մէջ երկու սիրահարները սիլի-բիլի են անում, (*քսում է ձեռքը նրա թշերին*), համբուրւում են, (*ուզում է համբուրել, բայց Վարդուհին յետ է քաշւում*), և յետոյ...

Վարդ. Չէ՞ որ ես չեմ կարող այդպի-

սի դրամատիկական դերեր խաղալ. դու գիտես, որ ես ընդամենը երկու անգամ եմ բեմ դուրս եկել և այն էլ անյաջող։

Միհ. Էհ, ինչեր ես ասում, հոգիս, դու իրաւ ես դրա մասին մտածում թէ անյաջող է եղել։ Չէ որ դու դեռ կատարեալ դերասանուհի չես և չես էլ կարող փորձած լինել, բայց ինչևիցէ, գոնէ ես հինգ տարի բեմին ծառայել եմ և խաղացել համարեա ամեն տեսակ դերեր, սկսած թունդ կոմիկ դերերից մինչև թունդ դրամատիկական, և եթէ չեմ սխալւում՝ առաջին սիրահարի դերերը։ Որ ես փորձած դերասանի հմտութիւնն ունիմ—այդ բանի մէջ կասկած չըկայ և խօսք էլ չէ կարող ելնել, քանի որ ես չատ դերասանուհիների հետ եմ ճանապարհորդել։ Թեկ հետ սիրելիս, միայն առաջին անգամն է, և դու քո դեղեցկութեանդ շնորհիւ՝ չատ չուտով առաջ կըգնաս։

Վարդ. Մի՞թէ իմ դեղեցկութեան շընորհիւ ես պէտք է առաջ գնամ։

Միհ. Ինչու այդպէս չըկարծել։ Դեղեցկութիւնդ մի կողմը, միւս կողմից իմ դերասանական հմտութիւնը լրացնում է ամեն ինչ։ Ոչ մի խոչընդոտ չի կարող

առաջը կանգնել, քանի որ ես կենդանի եմ։ (*Ուզում է փախչել, բայց նա յետ է քաշում*)։ Ինչո՞ւ ես այդպէս խրտնում, ինչ կայ վախենալու։

Վարդ. Ոչ թէ վախենում եմ, այլ...

Միք. Այլ ինչ...

Վարդ. Ամաչում եմ։

Միք. (*Բարկացած վեր է թռչում*)։ Ամաչում եմ։ Ի՞նչ է նշանակում ամաչում եմ։ Եթէ դեր խաղալու լինես սիրողների հետ, և դու, որ այստեղ եկել ես «փրբև դերասանուհի», խօսես ամաչելու մասին, հապա խեղճ սիրողուհիները ինչ պիտի անեն, հա, ասա՛ խնդրեմ, ինչ պիտի մտածեն նրանք քո մասին, երբ դու սկսես նրանց հետ էլ այնպէս խօսել, ինչպէս այժմ ինձ հետ ես խօսում, չէ՞ որ նրանք կըկասկածեն որ դու դերասանուհի չես, այն ժամանակ հօ մեզ երեսի վրայ կըթողնեն ու կըհեռանան, յետոյ, մենք էլ ինչ անենք, ինչով ճանապարհ ընկնենք։

Վարդ. Ինչո՞ւ, ինչու պիտի նրանք խրտնեն, եթէ ես խօսեմ համեստութեան մասին։

Միք. Դերասանուհի և համեստութիւն խօսքերը երբէք իրար չեն սազում, նրա համար որ, ով համեստ է, նա դերասանուհի լինել չէ կարող, չէ։ Որովհետև, եթէ դերասանը կամ դերասանուհին չըներկայացնէ բեմի վրայ կեանքը այնպէս, ինչպէս որ է իսկապէս մեր կեանքը, այդ կըլինի ոչ այլ ինչ, եթէ ոչ խաղատիկիններին ներկայացում։ Հաւատացնում եմ ձեզ, որ կեանքիս մէջ առաջին անգամն եմ տեսնում, որ դերասանուհին համեստութեան մասին խօսէ։ Դերասանուհի ու համեստութիւն... որտեղից որտեղ, մէջն ահագին սար ու ձորեր կան, այնպէս չէ՞ սիրելի հանդիսականներ, կարծեմ ձեզ աւելի լաւ յայտնի է, չէ։ Ասենք, մենք դերասաններս էլ մի լաւ պատուղ չենք, բայց այնուամենայնիւ, չէ՞ որ մենք դերասաններ ենք և ոչ դերասանուհիներ։

Վարդ. Պ. Միքայէլ, ես ուզում եմ մի փոքր հանգստանալ, սարսափելի յոգնած եմ։

Միք. Դէ՛, պառկիր և հանգստացիր, իսկ ես դարձեալ կուզեմ։ (*Գնում է դռների մօտ*)։ Է՛յ, Գրիգոր, եկ այստեղ։

ՏԵՍԻԼ 2

Նոյեմ եւ Գրիգոր

Գրիգ. Հրամմէ ապա։

Միհ. Ինձ համար մի չիչ գարեջուր բեր։

Գրիգ. (*ծիծաղելով*)։ Իչի գարեջուր վորն ա ապա։

Միհ. Էշը դու ես, իչի գարեջուր ով ա ասում, յիմար։ Ասում եմ մի չիչ գարեջուր, այսինքն (*ականջում զոռում է*) մի բութուլկա բիվո, հը՛, այժմ հասկացար։

Գրիգ. Հա, դէ ըթէնց ասա ապա, մի պիվա էլի։

Միհ. Հա՛, հա՛, դէ չուտ։

Գրիգ. Էս սըհաթիս ապա։ (*Գնում է մինչեւ դուռը եւ նորից յետ դառնում*)։ Ապա՛, ապով սև հաց էլ բերեմ։

Միհ. Ոչինչ հարկաւոր չէ, միայն պիվո բեր, հասկացա՞ր։

Գրիգ. Լա՛ւ ապա, հասկըցայ։ (*Գնում է*)։

Միհ. (*Մօտենում է Վարդուհուն, նա վեր է թռչում*)։ Ինչո՞ւ ես վեր թռչում, հոգիս, պառկիր։

Վարդ. Ախր չէ որ ամօթ է։

Միհ. Այ Վարդուհի, արդէն համը հանեցիր քո այդ ամօթխածութեամբ։ (*Դո-*

ռալով)։ Վերջապէս սա ինչ դերասանութիւն է։

Վարդ. Լա՛ւ, էլ ինչու ես բարկանում։

Միհ. Ինչպէս թէ ինչու ես բարկանում, արիւնս խառնում ես և ես դեռ հանգիստ կարո՞ղ եմ մնալ։ Ես միշտ ապատ եմ եղել բոլոր դերասանուհիների հետ և աւելի ազատ պիտի լինեմ քեզ հետ։

Վարդ. Խնդրում եմ հոգիս, աւելի ապատ մի լինիր, ինչպէս եղել ես ուրիշ դերասանուհիների հետ, եղիր նոյնպէս և ինձ հետ։

Միհ. Ո՛չ, այսպէս ապրել չի կարելի. ինչ է նշանակում ամօթ, ինձ համար ամօթ-մամօթ չըկայ և չըպիտի լինի քեզ համար դոնէ այստեղ, այս գաւառական քաղաքում, քանի որ այստեղի դերասանուհին և ամենամեծ ու փորձուած դերասանուհին—քանի որ այստեղ ենք—դու ես։ Ուրեմն պարզ է, որ, ամօթդ մի կողմը պիտի դնես և ինձ ուշադրութիւն դարձնես, իսկ եթէ ինձ չես լսիլ, ես կը թողնեմ քեզ ու կըհեռանամ։

Վարդ. (*Մօտենում է եւ կրծքին սեղմում*)։ Խնդրում եմ հոգիս այդպիսի բան չանես, ապա թէ ոչ ես լաց կըլինեմ (*հեռանում է նրանից*)։

Միք. Տեսնում ես, եթէ ես քեզ ասում եմ, որ դու դերասանուհի կըդառնաս, չես հաւատում. լսիր, տես թէ ես այժմ ինչից եզրակացրի: Ա՜յ, դու հէնց այս բոպէիս մօտեցար և կրծքիս սեղմուեցիր, դա նշանակում է որ բնութիւնն այդպէս էր պահանջում, քանի որ աղջիկը միշտ այդպէս է կատարում կեանքի մէջ: Բայց մի մոռանար որ բեմումն էլ մենք նոյն կեանքն են ներկայացնում, հետևապէս նոյնը պէտք է անենք և բեմի վրայ: Կան կեանքի զանազան երևոյթներ, որ միմիայն հայերը բեմի վրայ չեն ներկայացնում, բայց օտար բեմերի վրայ այդ մի ընդունուած բան է և այնտեղ ոչ ոք ոչնչից չեն ամաչում և ներկայացնում են շատ ազատ կերպով, իսկ մեզ մօտ այդ բոլորը կատարում է կուլիսների ետևը:

Վարդ. Օրինակ, այդ ինչպիսի բաներ են:

Միք. Եթէ քեզ հետաքրքրում է, ես մինչև անգամ կըներկայացնեմ:

Վարդ. Եթէ կարելի է, խնդրում եմ, որովհետև ես դեռ շատ բան չեմ տեսել և եթէ իսկապէս դերասանութեան ապագայ ունենամ պէտք է դիտենամ, այնպէս չէ:

Միք. Իսկապէս, իսկապէս, երևում է որ դու ընդունակութիւն ունես և եթէ ինձ համբերութեամբ լսես, դու մեր առաջնակարգ դերասանուհիներից մէկը կըլինես: Հետևապէս, ես ինչ որ անեմ, դու չըպէտք է խրտնես և համբերութեամբ պիտի տանես:

Վարդ. Լաւ, բայց չամաչացնես, չէ որ ես դեռ նոր եմ բեմ դուրս գալիս:

Միք. Ա՜յ, եթէ դու նորից այդպէս կըսկսես, ես այլևս ոչինչ չեմ պատմիլ քեզ և աւելի խիստ կըլինեմ փորձերի ժամանակ: Հիմա դու գիտես:

Վարդ. Աղաչում եմ մի բարկանալ, այլևս չեմ կրկնիլ:

Միք. Ուրեմն խօսք ես տալիս որ կըհամբերես մինչև վերջը՝ առանց մի որևէ տհաճակոն ձև անելու:

Վարդ. Այո, խօսք եմ տալիս:

Միք. Դէ, լաւ: (*Մտածում է*): Այստեղ կարծես մի բան պակասում է: Հա՛ իսկապէս դարձեալ չըբերեց: Ո՞ւր կորաւ նա: (*Գնում է դէպի դուռները, բաց է անում և երկու շիշ գարեջուր ձեռքին Գրիգորը կանգնած սպասում է*): Ինչ ես կանգնել, այ տղայ:

Գրիգ. Ես սպասում կըկիանչես ապա: Տեսամ որ խելի վախտ չըկեանչեցիր, քինացի մին պութուլկա էլ պիերի:

Միք. Ճատ լաւ ես ասել, դնա երկու հատ էլ բաժակ բեր:

Գրիգ. Սատանան ադա:

Միք. Հա, սատանան: (*Ծուռան գնում է*):

Գրիգ. (*Մօտենում է Վարդուհուն որ այդ ժամանակ պառկած է լինում, և համբուրում*):

Վարդ. Այդ ինչ ես անում:

Միք. Չէ որ դու խոստացար լաւ և մինչև վերջը առանց տհաճական ձև անելու համբերել:

Վարդ. Ախր դու համբուրեցիր:

Միք. Համբուրեցի նրա համար, որովհետև ներկայացումը սկսում եմ:

Գրիգ. (*Ներս մտնելով*): Ադա սատանները բերի:

Միք. Լաւ, դնա:

Գրիգ. Ադա, մին պետք է օգնում հարցունալ:

Միք. Դնա կորիր, ասում եմ քեզ: (*Շիշը ուզում է խփել*):

Գրիգ. (*Դուռը և փախչելով*): Իա, ադա:

Վարդ. Ինչ բարկացիստ էք եղել:

Միք. Ես միշտ էլ կըբարկանամ, երբ իմ դերասանական ձիրքերս փորձելու ժամանակ խանգարեն: Եթէ դու էլ մի որևէ բան անես և խանգարես այժմ իմ

փորձերը, չըգիտեմ թէ ինչ կըպատահի ինձ հետ: Այժմ դու գիտես:

Վարդ. Զըլինի թէ ինձ էլ կըխփես չիշը:

Միք. Չըգիտեմ, կարող է և պատահել: Է՜, խնդրեմ վերջացնենք այս խօսակցութիւնը. ես սկսում եմ դերասանական փորձերս քեզ հետ: Դու աչքերդ խփիր և սպասիր: (*Միքայէլը քաշում է սեղանը միս ափը և նստում է: Խմում է մի բաժակ գարեջուր*): Օխայ, խկսպէս լաւն էր և սառը: (*Նայում է Վարդուհու վրայ*): Դու Վարդուհի, աչքերդ խփիր և ննջիր, հասկացար:

Վարդ. Այո:

Միք. Դէ: (*Մի բաժակ էլի խմում է*): Խեղճ տղջիկ, ինչ է սպասում քեզ, ինչ ես մտածել կամ ինչ ես մտածում որ հետս ընկերացել ես և օտար տեղ եկել: Արդեօք ես այս յիմար գիւղում ներկայացում կըտամ, երբէք: Ես բերեցի այս թուչնակին որ մի փոքր հետը խաղամ, ապա թէ ոչ դարդս կարեւել էր իսկապէս այստեղ ներկայացում տալու: Ահա քընացնելու դեղ ունեմ գրպանումս, կըտամ այդ դեղը և... և կըսկսեմ իմ զբաղմունքներս: Ո՞վ է տեսնում թէ այստեղ ինչ է կատարւում: (*Խմում է*): Ակսենք: (*Մօտենում է և կրկնում*

ԳՐԱԴԱՐԱՆ

ափին նստում։ Ձեռքը փաթում է վը-
զին)։ Օ՜, իմ անգին հրեշտակս, ես
սիրեցի քեզ և մինչև վերջը պիտի սիրեմ։
Դու քնած ես, հոգիս։

Վարդ. *Այո՛, ննջում եմ, յոգնած...*

Միհ. (*Ձեռքի մատնում է*)։ *Ննջիր,*
ննջիր, իմ անմեղութեան հրեշտակս։

Վարդ. *Այդ ինչ ես անում։*

Միհ. (*Դեղը մատնցնում է*)։ *Ոչինչ։*
(*Համբուրում է*)։ *Ոչինչ իմ անգինս։*
(*Ստրից համբուրում է*)։ *Քունդ տանո՞ւմ*
է հա՜, հոգիս։

Վարդ. *Այո՛։*

Միհ. *Ուրեմն, ննջիր իմ կրծքիս վրայ,*
այստեղ աւելի լաւ է։ (*Մի փոքր լռու-*
թիւն։ Միքայէլը շարունակ համբու-
րում է։ Դոնները ծեծում են)։

Միհ. *Ո՞վ պէտք է լինի արդեօք, նը-*
րից սկսեցին խանդարել իմ դերասանա-
կան փորձերս, թո՛ւ, գլողը տանի ձեզ։
(*Համբուրում է և վեր է կենում կամ-*
ուց)։ *Ո՞վ է։*

Դրսից ծեծում են։

Միհ. *Ո՞վ է վերջապէս։*

Դրսից. *Ես եմ, օրիորդ Սալթիկեան։*

Միհ. *Օրիորդ է եղել, ինչ անեմ այժմ։*
Դրսից նորից ծեծում են։

Միհ. *Ինկոյն։* (*Շիրմայով ծածկում*

է կրատաթը։ Մի փոքր ուղղում է)։
Ներս համեցէք։ (*Դոնները բացում է և*
ներս է մտնում մի գեղեցկուհի)։

ՏԵՍԻԼ 3

Նոյնի և օր. Սալթիկեան

Միհ. (*Ձեռքը մեկնելով*)։ *Ո՞ւմ հետ*
պատիւ ունիմ տեսնելու։ (*Օրիորդը*
ձեռք չի տալիս)։

Սալթ. *Ինձ յայտնեցին, որ այստեղ ե-*
կել են յայտնի դերասաններ։

Միհ. (*Կողմ*)։ *Որքան անքաղաքավարի*
է եղել։ (*Սրան*)։ *Յեռոմ։*

Սալթ. *Որոնցից մէկը դերասանուհի է*
և այն էլ շատ յայտնի դերասանուհի։

Միհ. *Այո՛, շատ ուղիղ են ասել և*
դուք էլ չէք սխալուել։ Բայց ներողու-
թիւն, ո՞ւմ հետ պատիւ ունեմ...

Սալթ. *Օրիորդ Մարգարիտ Սալթի-*
կեան։

Միհ. *Շատ ուրախ եմ, շատ ուրախ*
եմ, Միքայէլ Սարգսեան, դերասան հա-
յոց դրամատիկական և կոմիկական
խմբի։

Սալթ. *Ներողութիւն, պ. դերասան,*
արդեօք տիկին դերասանուհուն կարող
եմ տեսնել։

46476

Միք. Դերասանուհին օրիորդ է, ոչ, թո՛ւ, գրողը տանի, գիտէք, տիկին դերասանուհին, այո՛, այսինքն իմ կնոջս կարող էք տեսնել, իսկոյն, նա հագնըւում է և շուտով դուրս կըգայ: (*Դողմ*): Ասա՛ սուտը գետինը մտնի թէ քո կինն է: Թէ կիմանայ: (*Սրան*): Այո՛, եթէ, ուզում էք, ես կըշտապեցնեմ նրան: (*Դողմ*): Հիմա ես ինչ անեմ որ խոստացայ, չէ՞ որ նրան այնպէս եմ քնացրել, որ այժմ հնչտ չի զարթնեցնել: (*Մտածում է*): Հը՛, արի՛ ես դուրս կըգամ Վարդուհու տեղը:

Սալր. Եթէ կարելի է տեսնել դերասանուհուն, ես կըսպասեմ:

Միք. Եթէ կըսպասէք, իսկոյն կըգայ: (*Գնում է շիրմայի ետեւը եւ ինքը կընոջ շորեր հագնում, մի քիչ էլ պուդրա է ածում երեսին, իսկոյն բեղերը ծածկում է ղեղով: Շիրմայի ետեւից կեղծ ձայնով խօսում է*): Օրիորդ, ամուսինս յայտնեց, որ դուք ցանկանում էք տեսնել ինձ:

Սալր. Այո՛, եթէ կարելի է տիկին ձեզ տեսնել, յատուկ կրնդրէի մի քանի բոպէ չըխնայել ինձ համար: (*Ժողովրդին*): Երեւի ինչ գեղեցկուհի է: Ա՜խ, Աստուած, ինչպէս դողդողում եմ, ինչպէս

պէտք է հանդիպում ես նրան, ո՜հ, սիրտս դնում-գալիս է: Աստուած վկայ, ամբողջ մարմնով դողում եմ. այս ինչ է պատահում ինձ, մի փոքր ջուր խմեմ: (*Սիսալմամբ գարեջուր է խմում եւ յանկարծ բերանից թափում է*):

Միք. (*Նոյնպէս կեղծ ձայնով*): Ի՞նչ պատահեց օրիորդ:

Սալր. Ոչինչ, տիկին, ոչինչ, բայց ինչու չարունակ դողում եմ այսպէս: (*Սրտում է: Մի փոքր լռութիւն*):

Միք. Դուք չըյոգնեցրէք օրիորդ:

Սալր. Ո՛չ, յարգոյ տիկին: (*Լռութիւն*):

Միք. Մի փոքր էլ սպասեցէք օրիորդ և ես իսկոյն կըգամ:

Սալր. Մնք չտապիլ տիկին, ոչինչ: (*Լռութիւն*):

Միք. Խօսմ չէք նեղանում, օրիորդ, որ սպասում էք:

Սալր. Խնդրեմ տիկին, դուք չընեղանաք, մնք չտապիլ:

(*Լռութիւն: Միքայէլը մի երգ է շաչնում, իսկ օրիորդը արդէն հանգստացում է սեղանի մօտ*):

Միք. Ես շուտով կըգամ, օրիորդ:

Սալր. Ես սպասում եմ: (*Լռութիւն մինչեւ դուրս գալը*):

Միք. (*Դուրս է գալիս կանացի շո-*

ներով): Օրիորդ, ես ուզում հետ պատիւ ունիմ տեսնուելու: (*Ձեռք է տալիս*):

Սալթ. Օր. Մարգարիտ Սալթիկեան:

Միհ. Միքայէլ, թող գրողը տանի, Հայկանուշ Սարգսեան, ինչպէս էք օրիորդ:

Սալթ. (*Ամաչելով*): Ներողակալ եմ տիկին, լաւ, միայն մեծ քոյրս մի փոքր հիւանդ է:

Միհ. Դուք մեծ քոյր էլ ունէք:

Սալթ. Այո, ինչպէս չէ, մեծ քոյր էլ ունեմ: Նա ամուսնացած է... և...

Միհ. Եւ... ինչ օրիորդ:

Սալթ. Ամաչում եմ ասել:

Միհ. Ինչիցն էք ամաչում, ով կայ այստեղ, չէ որ մենք կանայք ենք և երբ կանայք միայնակ են լինում, միշտ համարձակ են լինում իրար հետ:

Սալթ. Այդ իհարկէ այդպէս է, տիկին, բայց ես դեռ օրիորդ եմ:

Միհ. Դեռ անմեղ էք օրիորդ:

Սալթ. Իհարկէ տիկին, բայց...

Միհ. Բայց ինչ... Համարձակ եղէք, օրիորդ, համարձակ, մենք դերասաններս, այսինքն դերասանուհիներս, միշտ համարձակ ենք լինում և շատ ենք սիրում անմեղ օրիորդների խօսակցութիւնը:

Սալթ. Ես ճիշտն ասած, տիկին, ձեզ սիրեցի, սիրեցի հէնց առաջին անգամ տեսնելուց իսկ:

Միհ. (*Կողմ*): Զըլինի թէ սա ինձ ճանաչեց որ ես Միքայէլն եմ, հա՞, չէ՞, տեսնենք դեռ ինչ կըլինի: (*Ծիծաղելով*): Հա՛, ինչ ասացիք օրիորդ, ասում էք սիրեցիք, ես իրրև դերասան, թող, այսինքն իրրև կին, դերասանուհի, կեանքիս մէջ այնպէս չուտ չեմ գրաւել օրիորդով, ինչպէս այժմ: (*Լռութիւն: Միքայէլը ազատաբար նայում է*):

Սալթ. (*Ամաչելով*): Ինչո՞ւ էք այդպէս նայում տիկին:

Միհ. (*Բռնում է նրա գլուխը ձեռքերով եւ համբուրում թշին*): Նրա համար որ ես քեզ սիրեցի, իմ ազաւնակը:

Սալթ. (*Փոխադարձաբար համբուրում է*): Ես այսքան պատիւ չէի սպասում ձեզ պէս մի յայտնի դերասանուհուց:

Միհ. Այո, այսպէս ասած, օրիորդ, մեր բոլոր դերասանուհիները նախանձոտ են բացի ինձանից: (*Համբուրում է*): Իմ հրեշտակս:

Սալթ. (*Սեղմում է կրծքին*): Կեանքիս մէջ այսպիսի երջանիկ օր ես դեռ

ես չեմ զգացել։ (*Թուլանում է նրա կրծքի վրայ*)։

Միք. Իսկ ես, ես ես քեզ պէս մի անմեղ աղջիկ, երբէք դիրկս չէի առած։ (*Համբուրում է*)։

Սալ. (*Բռնում է ձեռքը Միքայէլի թշին*)։ Որքան դեղեցիկ էք, տիկին։

Միք. Իսկ դուք որքան փափուկ էք, օրիորդ։ (*Ողմ*)։ Կատարեալ արքայութիւն։

Սալ. Ես թուլանում եմ, տիկին։

Միք. Իսկ ես, աւելի ես։ (*Համբուրում է։ Ողմ*)։ Ո՞վ կըմտածէր թէ ես կարող եմ այսպիսի գեղեցիկ աղջկայ հետ խաղալ։ Օխայ... (*Նրան*)։ Ի՞նչ պատահեց ձեզ՝ օրիորդ, սպասէք, ես դեղ տամ։ (*Հանգիստ նստեցնում է նրան եւ ինքը գնում է շիրմայի ետեւը քնացնելու դեղը բերում։ Ողմ*)։ Ի՞նչ անեմ, արդեօք սրան էլ այս դեղը տամ և յետոյ երկուսի հետ սկսեմ խաղալ։

ՏԵՍԻԼ 4

Նոյեմ եւ Գրիգոր

Գրիգ. (*Ցանկարծ դուռը բացում է*)։ Աղա։

Միք. Աղէն քնած է, գնա կորիր յիմարի գլուխ։ (*Վազում է յետեւից, նա փախչում է։ Կամաց-կամաց մօտենում է օրիորդին*)։ Օրիորդ, այժմ ինչպէս էք զգում ձեզ։

Սալ. Ոչինչ, մի փոքր լաւ։

Միք. Որ մի փոքր լաւ էք զգում, ես դրա համար կըհամբուրեմ ձեզ։ (*Համբուրում է*)։

Սալ. Ինչպէս տաք է ձեր համբոյրը, տիկին։

Միք. Իսկ տղամարդու համբոյրը ինչպէս է լինում, չես զգացել։

Սալ. Ոչ. տիկին, հաւատացնում եմ որ չեմ զգացել, թէև մէկը մի անգամ ուզում էր կանայի շորերի մէջ թաղնըւած համբուրել, բայց բռնեց։

Միք. (*Ողմ*)։ Հիմա ես ինչ անեմ; չըլինի թէ ես էլ բռնեմ։ (*Նրան*)։ Այդ ինչպէս պատահեց։

Սալ. Հէնց այնպէս, երբ նա ցանկացաւ բերանի կապը բանալ և համբուրել, յանկարծ բեղերը երևացին և ես ճչալով տուն վազեցի։

Միք. Իսկ ես օրիորդ, որ կանանց համբոյրներ չատ եմ զգացել, այսինքն այն կանանց, որոնց ես համբուրել եմ, ամենքը խոստովանում են, որ իմ համ-

բոյրը նոյնն է, ինչ տղամարդու համբոյրը։

Սալր. Ի՞նչ ասացիք տիկին, կանանց համբոյրները չատ էք գգացել։

Միք. Ը... այսինքն տղամարդկանց էի ուզում ասել... բեմի վրայ որ սովորել եմ, դրա համար եմ այդպէս չփոթու

։

Սալր. Ի՞նչ էք սովորել տիկին։

Միք. Այն, որ իբրև կին, չատ անգամ և տղամարդու դերեր եմ խաղում բեմի վրայ։

Սալր. Ինչպէս թէ տղամարդու, իսկ շորերը, գէմքը, բեղերը...

Միք. Բոլորը, բոլորը, հագնում եմ ինչպէս տղամարդ, բեղեր եմ կպցնում և այսպէս շարունակ մի ամբողջ գիշեր ես ներկայացնում եմ տղամարդի դեր։

Սալր. Բայց դժւար կըլինի, այնպէս չէ։

Միք. Դժւարութեան ինչ կայ։ Հէնց այս բողէիս ես... (*Կողմ*)։ Փա՛ւ, գրողը տանի, քիչ էր մնում գաղտնիքը բանայի, այս ինչ խայտառակութիւն սլիտի պատահէր։ Ո՜հ, ո՜հ, համբերել այլես անկարող եմ։ (*Օրիորդին*)։ Ուրեմն այդպէս, դուք դեռ ես չէք տեսել որ կինը տղամարդու շորեր ունենայ հագած։

Սալր. Ո՞չ, տիկին, այդպիսի բան դեռ չեմ տեսել։

Միք. Հետաքրքիր է երևի, ուզում էք իսկոյն շորս փոխեմ, տղամարդու շոր հագնեմ։ Ես իսկոյն ամուսնուս շորերը կըհագնեմ և դուրս կըգամ, ուզո՞ւմ էք։

Սալր. Շատ հետաքրքիր կըլինի։

Միք. Ուրեմն սպասեցէք։ (*Դնում է և յետ նայում*)։ Բայց թոյլ տուէք, օրիորդ, գոնէ իբրև կին, մի անգամ ես համբուրել ձեզ։

Սալր. (*Ինքն է նետւում նրա գիրկը*)։ Մեծ ուրախութեամբ տիկին։ (*Համբուրւում են*)։

Միք. Իսկ եթէ տղամարդ դառնամ բեղերով, այն ժամանակ էլ թոյլ կըտաք որ համբուրեմ։

Սալր. Ինչու չէ, տիկին, չէ որ դուք կին կըլինէք տղամարդու հագուստով։

Միք. Իսարկէ հոգիս, ուրեմն սպասեցէք։ (*Թաքնւում է*)։

Սալր. (*Օրիորդին*)։ Որքան հետաքրքիր կըլինի տիկինը տղամարդու հագուստով, նամանաւանդ եթէ բեղեր էլ ունենայ, օ, այն ժամանակ չատ ծիծաղաչարժ կըլինի։ (*Տիկնոջը*)։ Տիկին, երևի դուք պատրաստւում էք։

Միք. Իսարկէ, ապաւնեակս։

Սալ. Շատ դուրս կըգաք, ես անհամբեր սպասում եմ ձեզ։

Միք. Մի փոքր էլ և ես պատրաստ կըլինեմ։

Սալ. (*Ցայում է շիրմայի ծակից*)։ Ա՜խ Աստուած իմ, երբ պէտք է դուրս գայ։ Երևի ծիծաղից ինձ չեմ կարող զսպել։ (*Ստից նայում է*)։ Ոչինչ չէ երևում։ Ա՜խ, որչափ ես ցանկանում եմ շուտ տեսնել։ (*Տիկնոջը*)։ Տիկին—պարոն, կարող եմ այդ կողմը գալ, հա՞...

Միք. Ո՛չ, օրիորդ, կուլիսի ետև երբէք չի կարելի։

Սալ. Այդ ինչ կուլիս է, չէ որ այդ շիրմա է։

Միք. Իսկ ներկայ լոսէիս, այս ներկայացնում է մեզ կուլիս։

Սալ. Անհամբերութիւնից ես դուրս եմ գալիս, չըգիտեմ թէ ինչ անեմ։ Վերջապէս դուրս կըգա՞ք տիկին—պարոն։

Միք. Ինչո՞ւ էք տիկին—պարոն ասում, այժմ ուղղակի կարող էք ասել, պարոն, քանի որ ես այժմ պարոնի հագուստ ունեմ։

Սալ. Շատ բարի, այսուհետև ես պ. Սարգսեան կանչանեմ ձեզ։

Միք. Եւ չէք սխալուիլ։

Սալ. Ինչպէս թէ չեմ սխալուիլ։

Միք. Հէնց այնպէս, որովհետև ես չատ նման եմ իմ ամուսնուս՝ պ. Սարգսեանին։ Նամանաւանդ որ այժմ ես հագնում եմ ամուսնուս չորերը։ Մի փոքրը էլ որ սպասէք ես իսկոյն դուրս կըգամ։

Սալ. Բարի, ես էլ կընստեմ և կըսպասեմ։ (*Լռութիւն մինչև դուրս գալը*)։

ՏԵՍԻԼ 5

Նոյեմ եւ Գրիգոր

Գրիգ. (*Դոնները բանալով, մէջտեղից յայտարարում է*)։ Աղա, մի ջահել տղայ ա իկալ ու իրա քիր կըխարցնայ, ասում ա Մարքարիտ Սաղիանիկիան ա, Սալաթնիկով ա, ինչ ա, էտեղ ա թա չէ։ Էդ հինչ ազգ ա տղայ, դա հով ա։

Սալ. Դա ես եմ։

Գրիգ. Էդ դու ը՞ս Մարքարիտը... Էս ա ասկերը իկալ ա։

Սալ. Եղբա՛յր, դնում ուրախացնեմ նրան իմ այսպիսի լաւ, սիրալիր ընդունելութեան համար, այն ինչ նա կարծում էր թէ բոլոր գերասանները չատ անքաղաքավարի մարդիկ են։ (*Վերցնում է զլխարկը եւ դուրս վազում*)։

Միք. (*Շիրմայի ետեւից*)։ Այդ ինչ գողացար որ փախչում ես, Գրիգոր, Գրիգոր։ (*Ուղղակի դուրս է վազում դոների միջից, զնում է ձախ կողմը, իսկ աջ կողմից ներս է մտնում Գրիգորը*)։

Գրիգ. Աղա, ինձը կեանչում, իա, մարդ չըկայ։ Աղա։ (*Շիրմային թրխթրխկացնում է եւ ներս է նայում*)։ Մի կնիկ ա քնած. իա, ապէն ինչ էլաւ։ (*Սեղանի եւ աթոռների տակն է նայում։ Շատ բարձր ձայնով*)։ Աղա, ուր ես։

Վարդ. (*Զարթնելով*)։ Այստեղ եմ, այստեղ։

Գրիգ. Է՜, ձէնիս վրայ էն կնիկ զարթաւ։ Փախնեմ, թա չէ ասան...

Միք. (*Դրսից*)։ Փախաւ, փախաւ անիծածը։ (*Այս ասելու ժամանակ պատի անկիւնում թաքնւում է Գրիգորը։ Միքայէլը ներս է վազում եւ դոների մօտ կանգնում։ Կարծելով թէ օրիորդը դեռ եւս այնտեղ է կանգնած, հէնց դոներից զլուխը խոնարհած ասում է*)։ Ներողութիւն օրիորդ, որ ձեզ... (*նայում է շուրջը եւ տեսնում է Գրիգորին դողդողալիս*)։ Ա՜յ դու աւազակ, այդ ուր ես թագնւել, ինչ գողացար և

ուր փախար, ասա՛ շուտով, (*առաջ բաշելով ականջից բռնած*), թէ չէ հոգիդ մէջքիցդ կըհանեմ։

Գրիգ. Աղա, հէչ...

Միք. Իսկ ինչ եղաւ օրիորդը։

Վարդ. Այստեղ եմ, այստեղ։ (*Միքայէլը թողնում է Գրիգորին, իսկ վերջինս իսկոյն փախչում է*)։

Միք. Ասուած եմ, այս ուր ձայնն է, Վարդուհին, ալէն...

Վարդ. (*Աչքերը տրորելով դուրս է գալիս*)։ Բաւական քնեցի, կարծեմ, բայց ինչ ազդեցութիւն ունեցող քուն էր այս։

Միք. Միշտ այդպէս է լինում երբ մարդիկ ճանապարհորդութիւնից յետոյ են քնում, միշտ առողջարար և ազդեցութիւն ունեցող քուն է գալիս։ (*Կողմ*)։ Երևի լաւ չէ ներգործել դեղս։

Վարդ. Ի՞նչ ասացիր։

Միք. Ոչինչ հոգիս, ինքս ինձ խօսում եմ ներկայացման մասին։

Վարդ. Հա՛, իսկապէս, ինչպէս եղաւ, կարդացիր։

Միք. Ինչպէս չէ, ամեն բան կարդին է, բայց ափսոս որ (*կողմ*) դեռ ես գործը չըվերջացրած, դու զարթնեցիր։

Վարդ. Ինչ կայ, այսօր չըլինի, վաղը կըվերջացնես։

Միք. Բայց այդ բանը քեզանից է կախուած։

Վարդ. Ինչպէս թէ ինձանից։

Միք. Հէնց այնպէս քեզանից։

Վարդ. Եթէ ինձանից է կախուած, ես պատրաստ եմ։

Միք. Ուղիղ։

ՏԵՍԻԼ 6

Դոյնք եւ Գրիգոր

Գրիգ. (*Դռներից*)։ Պոլիցէն ձեզ ուզում ա ասա։

Միք. Գնա կոբիր խոզի գլուխ, նոքից խանդարեցիր իմ դերասանական փորձերս։

Գրիգ. Ախր ասա ես հինչ անեմ, եւ պոլիցէն ա օղում։

Միք. Բայց ինչ են ուզում։

Գրիգ. Գիտըմ չեմ։

Միք. Գնա, ասա գալիս ենք, մենք մի փոքր գործ ունենք վերջացնելու, խոյսն կըգանք։

Վարդ. Այո, գնա ասա որ խոյսն կըգան, մի փոքր գործ ունենք։

Գրիգ. Լաւ։ (*Գնում է*)։

Միք. Իսկ մենք էլ գնանք չոլերը փոխելու։ (*Երկուսն էլ ներս են մտնում*

շիրմայի ետեւը։ Խուլ աղաղակ երկու-երեք րոպէ աշսի)։

Վարդ. Ա՜յ... (*Հեկեկանք*)։ Ի՞նչ արեր...

Միք. (*Դուրս վազելով շիրմայի ետեւից*)։ Վերջացաւ... Այժմ փախչենք... (*Ուզում է զլխարկը վերցնել եւ փախչել*)։

ՏԵՍԻԼ 7

Դոյնք եւ Գրիգոր

Գրիգ. Աղա, պոլիցէն էկաւ։

Միք. Գնա, գալիս եմ... (*Գրիգորին մի կողմ տրելով, ինքը դուրս է վազում*)։

ՎԱՐԱԳՈՅՐ



202
10

Լույս է տեսել

Օրիորդի ապրումը (ՖԷՉԿՅ Հ. Բ.) 25 կ.

Գիրք՝ Тифлисъ. Подъ Сѣвернами номера. Айрапету Бабурянцу.

2013